Բյուջեի հետ հաշվարկների հաշվառումը

Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հին հաշվային պլանում բյուջեի հետ հաշվարկների հաշվառումը իրականացվում էր 68 «Հաշվարկներ բյուջեի հետ» ակտիվապասիվային հաշվով:

Հաշվապահական հաշվառման նոր հաշվային պլանում ակտիվապասիվային հաշիվների կիրառումը հնարավորինս չի օգտագործվում և այդ առումով հին հաշվային պլանի 68 «Հաշվարկներ բյուջեի հետ» հաշվին նոր հաշվային պլանում փոխարինում են երեք առաջին կարգի հաշիվներ, որոնցից երկուսն ակտիվային են՝ 225 «Ընթացիկ դեբիտորական պարտք բյուջեի գծով» և 226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր», իսկ 524 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին» հաշիվը՝ պասիվային:

524 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին» հաշվի կրեդիտում արտացոլվում է տարբեր հարկատեսակների և պարտադիր վճարների գծով (երկրորդ կարգի հաշիվներով) պարտավորությունը, իսկ դեբետում դրանց մարումը:

Օրինակ՝ շահութահարկի գծով հարկային պարտավորության առաջացման դեպքում տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը՝

ԴԲ 751 «Շահութահարկի գծով ծախս»

ԿՐ 5241 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին շահութահարկի գծով»

եկամտահարկի գծով՝

ԴԲ 5271 «Պարտավորություններ անձնակազմին աշխատանքի վարձատրության գծով»

ԿՐ 5242 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին եկամտահարկի գծով»

ավելացված արժեքի հարկի գծով՝

ԴԲ 221 «Առևտրական դեբիտորական պարտքեր չկապակցված կողմերի գծով» և այլն

ԿՐ 5243 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին ավելացված արժեքի հարկի գծով»

գույքահարկի գծով՝

ԴԲ 7158 «Չփոխհատուցվող հարկերից ծախսեր»

ԿՐ 5245 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին գույքահարկի գծով»

իսկ մարման դեպում՝

ԴԲ 5241 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին շահութահարկի գծով»

ԴԲ 5242 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին եկամտահարկի գծով»

ԴԲ 5243 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին ավելացված արժեքի հարկի գծով»

ԴԲ 5245 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին գույքահարկի գծով»

ԿՐ 252 «Հաշվարկային հաշիվ» և այլն

Եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջում առաջանում է գերավճար, ապա այն 524 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին» հաշվից (համապատասխան հարկատեսակների գծով) տեղափոխվում է 225 «Ընթացիկ դեբիտորական պարտք բյուջեի գծով» հաշվի դեբետ, այսինքն գերավճարի գումարի չափով տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը՝

ԴԲ 225 «Ընթացիկ դեբիտորական պարտք բյուջեի գծով»

ԿՐ 524 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին»

Հետևաբար հաշվետու ժամանակաշրջանի վերջում մնացորդ կարող է լինել կամ 524 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին» հաշվում՝ որպես ապառք, կամ էլ 225 «Ընթացիկ դեբիտորական պարտք բյուջեի գծով» հաշվում՝ որպես գերավճար:

226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր» հաշիվը կազմակերպություններն օգտագործում են ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի գծով հաշվանցման (փոխհատուցման) ենթակա գումարների արտացոլման նպատակով:

Մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված և հաշվանցման ենթակա անուղղակի հարկերի գծով տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները՝

ա) երբ հարկերի վճարման ժամկետը չի հետաձգվում.

ԴԲ 226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր»

ԿՐ 521 «Առևտրական կրեդիտորական պարտքեր չկապակցված կողմերին» և այլն,

բ) երբ հարկերի վճարման ժամկետը հետաձգվում է.

ԴԲ 226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր»

ԿՐ 262 «Ընթացիկ ակտիվներ հետաձգված հարկերի գծով»

Հաշվետու ժամանակաշրջանի վերջում այդ գումարներով հաշվանցվում են առաջացած հարկային պարտավորությունները՝

ԴԲ 524 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին»

ԿՐ 226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր»

Երբ այս հաշվանցումից հետո առաջանում է բյուջեից փոխհատուցման ենթակա գումար, այսինքն համապատասխան հարկատեսակի գծով 226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր» հաշվի դեբետային շրջանառությունը ավելի մեծ է 524 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին» հաշվի կրեդիտային շրջանառությունից, ապա այդ տարբերությունը ձևակերպվում է որպես դեբիտորական պարտք՝

ԴԲ 225 «Ընթացիկ դեբիտորական պարտք բյուջեի գծով»

ԿՐ 226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր»

225 «Ընթացիկ դեբիտորական պարտք բյուջեի գծով» հաշվի դեբետով ձևակերպվում են նաև ինչպես մաքսային մարմինների կողմից մաքսային սահմանում

ապրանքների ներմուծման ժամանակ գանձված ավելացված արժեքի հարկի գումարը, այնպես էլ որպես կանխավճար բյուջե վճարված գումարները՝

ԴԲ 225 «Ընթացիկ դեբիտորական պարտք բյուջեի գծով»
ԿՐ 228 «Ընթացիկ դեբիտորական պարտք անձնակազմի հետ»
ԿՐ 252 «Հաշվարկային հաշիվ» և այլն:

Հաշվետու ժամանակաշրջանում առաջացած հարկային պարտավորությունը նախորդ ժամանակաշրջանի գերավճարով մարելու (նվազեցնելու) դեպքում տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը՝

ԴԲ 524 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին»
ԿՐ 225 «Ընթացիկ դեբիտորական պարտք բյուջեի գծով»

Թաթուլ Մովսիսյան
«Էկոնոմիկա և իրավունք» 6.2000